Ազատության դրոշին վերաբերող ժամանակակից ուսմունքներ

«Ի հիշատակ մեր Աստծո»

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Նիլ Լ. Անդերսենն ուսուցանել է.

Աշխարհում կան մարդիկ, որոնք շատ քիչ բան գիտեն Հիսուս Քրիստոսի մասին, իսկ աշխարհի որոշ մասերում, որտեղ դարեր շարունակ հռչակվում է Նրա անունը, հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ նվազում է: . . .

Քանի որ աշխարհը ավելի քիչ է խոսում Հիսուս Քրիստոսի մասին, եկեք մենք ավելի շատ խոսենք Նրա մասին: Երբ մեր իրական բնույթը բացահայտվի՝ որպես Նրա աշակերտներ, մեր շրջապատից շատերը պատրաստ կլինեն լսել մեզ: (Նիլ Լ. Անդերսեն, «Մենք խոսում ենք Քրիստոսի մասին», *Լիահոնա*, նոյեմբեր 2020 թ., 88, 90)

«Ի հիշատակ . . . մեր կրոնի»

Առաջին Նախագահությունից նախագահ Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է.

Եթե մենք դադարում ենք գնահատել մեր եկեղեցիները որևէ պատճառով, մենք վտանգի տակ ենք դնում մեր անձնական հոգևոր կյանքը, և այն մեծ թվով մարդիկ, որոնք հեռանում են Աստծուց, նվազեցնում են Նրա օրհնությունները մեր ազգերին:

Հաճախելով Եկեղեցի և մասնակցելով ժողովներին՝ մենք դառնում ենք ավելի լավ մարդ և ավելի լավ ազդեցություն ենք թողնում ուրիշների կյանքում: Եկեղեցում մեզ ուսուցանում են, թե ինչպես կիրառել կրոնական սկզբունքները: Մենք սովորում ենք միմյանցից: . . .

. . . Ես աղոթում եմ, որ մենք բոլորս հաստատուն մնանք Եկեղեցու այս փորձառություններում, երբ փնտրում ենք հավերժական կյանք՝ մեծագույնը Աստծո բոլոր պարգևներից: (Դալլին Հ. Օուքս, «Եկեղեցի հաճախելու պատճառները», *Լիահոնա*, նոյեմբեր 2021 թ., 24, 26)

«Ի հիշատակ մեր. . . ազատության»

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ռոնալդ Ա. Ռասբանդն ուսուցանել է.

Ի՞նչ է կրոնական ազատությունը:

Դա երկրպագելու ազատությունն է իր բոլոր ձևերով. հավաքվելու ազատությունը, խոսքի ազատությունը, անձնական համոզմունքներով գործելու ազատությունը և նույնը անելու ուրիշների ազատությունը: Կրոնական ազատությունը թույլ է տալիս յուրաքանչյուրիս ինքնուրույն որոշել, թե ինչին ենք հավատում, ինչպես ենք ապրում և գործում մեր հավատքի համաձայն, և ինչ է Աստված ակնկալում մեզնից: . . .

Ես ձեզ հորդորում եմ պաշտպանել կրոնական ազատության գործը: Դա Աստծո կողմից տրված ազատ կամքի սկզբունքի արտահայտությունն է:

Կրոնական ազատությունը հավասարակշռություն է բերում մրցակցող փիլիսոփայություններին: Կրոնի բարիքը, դրա հասանելիությունը և սիրո ամենօրյա գործողությունները, որոնք կրոնը ներշնչում է, միայն բազմապատկվում են, երբ մենք պաշտպանում ենք հիմնական համոզմունքները արտահայտելու և գործելու ազատությունը: (Տես նաև Ռոնալդ Ա. Ռասբանդ, «Բժշկել աշխարհը» *Լիահոնա*, մայիս, 2022 թ., 91, 93)

«Ի հիշատակ . . . մեր խաղաղության»

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է.

Բոլոր վերքերի Ամոքիչը, Նա, ով ուղղում է բոլոր սխալները, խնդրում է մեզ աշխատել Իր հետ՝ խաղաղության պահպանման դժվարին աշխատանքում այն աշխարհում, որը չի գտնի խաղաղություն մեկ այլ ճանապարհով: . . .

. . . Ես խնդրում եմ ձեզ խաղաղարար լինել՝ սիրել խաղաղությամբ, փնտրել խաղաղություն, ստեղծել խաղաղություն, փայփայել խաղաղությունը: Այդ կոչը ես անում եմ Խաղաղության Իշխանի անունից: (Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Հաշտության սպասավորությունը», *Լիահոնա*, նոյեմբեր 2018 թ., 79)

«Ի հիշատակ . . . մեր [ընտանիքների]»

Երիտասարդ կանանց նախկին գերագույն նախագահ քույր Բոննի Լ. Օսկարսոնն ուսուցանել է.

Յուրաքանչյուրը, անկախ ամուսնական կարգավիճակից կամ երեխաների թվից, կարող է պաշտպանել Տիրոջ Ծրագիրը, որը նկարագրվում է ընտանիքի վերաբերյալ հայտարարության մեջ: Եթե դա Տիրոջ Ծրագիրն է, այն պետք է նաև մեր Ծրագիրը լինի: . . .

. . . Եկեք օգնենք կառուցել Աստծո արքայությունը՝ համարձակ կանգնելով և պաշտպանելով ամուսնությունը, Ծնողավարությունը և տունը: Տերը ցանկանում է, որ մենք լինենք քաջ, անսասան և անխախտ ռազմիկներ, որոնք կպաշտպանեն Իր Ծրագիրը և կսովորեցնեն եկող սերունդներին Իր ճշմարտությունները: (Բոննի Լ. Օսկարսոն, «Ընտանիքի մասին հայտարարության պաշտպանները», *Լիահոնա*, մայիս 2015 թ., 15, 17)

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD60013873_201_332-teacher_handout-1